

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ghazaryanruzan@ysu.am
ՀՏԴ 821.111.0(73)

ԵՐԵՒԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Վիլյամ Սարոյան, փոքր արձակ, «Իմ անունը Արամ է», պատմվածաշար, ինքնակենսագրական ժանր, պատում, երեխայի ու մեծահասակի կերպար, գաղթականություն, ազգային արմատներ, ամերիկյան միջավայր:

Ключевые слова и выражения: Вильям Сароян, малая проза, «Меня зовут Арам», цикл рассказов, автобиографический жанр, повествование, образы ребенка и взрослого, эмигранты, национальный колорит, американская среда.

Key words and expressions: William Saroyan, little prose, “My Name is Aram”, collection of stories, autobiographical genre, narration, child’s and adult’s character, immigration, national roots, American environment.

Ամերիկյան գրականության՝ անգլիական ավանդական գրականությունից սկիզբ առնելը, անտարակույս, պայմանավորված է պատմական փաստով. ամենևին էլ գաղտնիք չէ, որ Միացյալ Նահանգները եղել է անգլիական գաղութ, սակայն հետագայում այն ձեռք բերեց ինքնատիպ որոշակի հատկանիշներ և ստեղծեց սեփական ավանդույթներն ու հարթեց իր ուրույն ուղին: Դրամայի, պոեզիայի, գեղարվեստական արձակի և գրաքննադատության ասպարեզում առաջացած փոփոխությունները ձևավորվեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում և շարունակվեցին դրան հաջորդող շրջանում: Իրադարձություններով լի այդ տարիներն իրենց դրոշմը թողեցին գրական զանազան ստեղծագործությունների վրա, որոնց հեղինակները միտված էին դեպի արմատական փորձարկումները:

Այսպես, 19-րդ դարում դրաման այնքան էլ մեծ տեղ չէր զբաղեցնում արվեստների շարքում, սակայն 20-րդ դարասկզբին հիմնական փորձարարությունները ծայր առան հենց այս ոլորտում, երբ գրական ասպարեզում հայտնվեց նոր դրաման. վերջինս ծագեց իբրև բողոք դրամատիրական աշխարհի դեմ: Այս նույն ժամանակաշրջանում

ամերիկացի դրամատուրգներն ստեղծեցին, այսպես կոչված, Փոքր թատրոնը, որը նրանց՝ Եվրոպայում կատարած ճամփորդությունների արգասիքն էր: Այդ թատրոնում ստեղծված դրամաներն աչքի էին ընկնում նորարարության ոգով և հասուն ու լուրջ մոտեցումներով:

Միաժամանակ լայնորեն ընդարձակվում էր նաև ամերիկյան արձակը, որն ընդգրկում էր սոցիալական կյանքի տարբեր շերտերն ու հարում էր իրապաշտական դպրոցին: Այսպես, օրինակ, Էդիթ Ուորթոնը (1862-1937) իր «Ամեղության դարաշրջան» երկում պատկերում է գրական այնպիսի հերոսի, որը նախընտրում է ամուսնանալ պահպանողական մտածելակերպ ունեցող կնոջ, այլ ոչ թե գրավիչ օտարերկրացուհու հետ: Այդ նույն ժամանակահատվածում Թեոդոր Դրայզերը (1871-1945) կերտում է նշանավոր «Քույր Քերրին», ուր պատկերում է գյուղից քաղաք տեղափոխված աղջկան, որը վերածվում է հոմանուհու:

1920-ականներին ամերիկյան գրականության մեջ առաջանում է գրական մի նոր դպրոց, որտեղ հեղինակների երկերն աչքի էին ընկնում ժամանակակից կյանքի հոգեբանական խոր պատկերումներով: Այդ երկերը ոչ միան քնարական էին ու արտացոլում էին անհատական զգացումներ, այլև լի էին հուսահատության ճիչերով և մռայլ տրամադրությամբ, քանի որ ներառում էին հետպատերազմյան սերնդի խորապես ապրված հուսախաբությունը: Այդպիսի գրվածքներից կարելի է մասնավորապես նշել Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդի «Դրախտից այս կողմ» և Մինքլեր Լևիսի «Գլխավոր փողոց» ստեղծագործությունները:

Սակայն ամերիկյան գրականության էջերում հայտնված հուսահատ տրամադրության կողքին, որն աներկբայելիորեն պայմանավորված էր Մեծ ճգնաժամով, կարելի է գտնել նաև բավական խոր ու հոգեբանորեն առինքնող թեմաներ, որոնցից առաջնայինը, ինչ խոսք, երեխաներին վերաբերող խնդիրներն են: Դրանց արձածումը պարզորոշ նկատելի է Վիլյամ Սարոյանի (1908-1981) գրական ժառանգության մեջ («Մարդկային կատակերգություն» վիպակը, «Իմ անունը Արամ է» պատմվածաշարը և այլն): Ծագումով հայ ամերիկացի այս գրողն աշխարհին հայտնի է իր բազմաբնույթ ու բազմաժանր ստեղծագործություններով, որոնք ներառում են դրամաներ, արձակ երկեր, ինչպես նաև ինքնակենսագրական նյութեր: Նրա երկերը տարբերվում են թե՛ ժանրային և թե՛ թեմատիկ տեսանկյունից ու կարող են դիտարկվել զանազան տեսանկյուններից:

1930-40-ականները սարոյանական երկերի հաջողության ամրագրման տարիներն են, թեև նրա երկերից շատերը չեն հրատարակվել հեղինակի կենդանության օրոք: Սարոյանի ստեղծագործությունների մեծ մասը ինքնակենսագրական է՝ հիմնված սեփական մանկության, Մուրբ Հովակիմի հովտում ապրող ու աշխատող հայ և ամերիկացի այգեպանների

մասին ունեցած հիշողությունների, ինչպես նաև գաղթականների վերաբերյալ սեփական հայեցակետի վրա:

Վիլյամ Սարոյանը ծնվել է Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքում՝ Բիրթիսից գաղթած Արմենակ և Թագուհի Սարոյանների ընտանիքում: Ուշագրավ է, որ ապագա գրողի գրական գործունեությամբ զբաղվելու ճակատագրական որոշումը պայմանավորված էր հոր՝ Արմենակ Սարոյանի գրառումներին ծանոթանալու սրտառուչ փաստով: Նրա գրական երախայրիքները տպագրվել են 1930-ականներին, որոնց թվում էր նաև «Կոտրված անիվը» պատմվածքը, որը հեղինակը լույս է ընծայում «Հայրենիք» խորագրով հայկական ամսագրում՝ «Միրակ Գարոյան» գրական ծածկանվամբ: Սակայն Սարոյան գրողի կայացումն ու ճանաչումը տեղի է ունենում 1934-ին, երբ առաջին անգամ լույս է տեսնում «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա» հանրահայտ պատմվածքը: Հետագայում՝ 1940-ին, նա լույս է ընծայում «Իմ անունը Արամ է» պատմվածաշարը, ուր հանրությունն ականատես է լինում գաղթականների գունեղ կյանքի պատկերներին:

Վիլյամ Սարոյանի պատմվածքները հիմնված են առօրեական պատկերների վրա, չունեն դրամատիկական զարգացումներ կամ անսպասելի շրջադարձեր, իսկ հերոսներն էլ սովորական մարդիկ են, որոնցից շատերը սոսկ երագողներ են, որ ապրում են սահմանափակված աշխարհում և անկարող են իրականացնել իրենց վարդագույն երազանքները: Բայց նրանք շարունակում են երագել, ու թեև այդ երազանքների նավակը հաճախ խորտակվում է առօրյա հոգսերի հորձանուտում, այնուամենայնիվ նրանք չեն դադարում պայքարել և յուրաքանչյուր օր ապրում են որպես բացառիկ ու կյանքի մատուցած վերջին պարգև: Այս կերպարները գրավիչ են, միամիտ, զգացմունքային, զվարճալի ու գործում են հանպատրաստից:

Սարոյանի արձակի հիմնական կերպարը հաճախ երեխան է, որն օրեցօր բացահայտում է իրեն շրջապատող աշխարհն ու ամեն ինչում հրաշք է գտնում: Մանկական հայացքով կերտված այս յուրօրինակ աշխարհում ամեն ինչ կանխատեսելի է ու ակնհայտ: Սակայն դա բնավ չի նշանակում, թե երեխաների ու մեծահասակների աշխարհը տարանջատված է: Ահա թե ինչ է այս մասին գրում սարոյանագետ Հովարդ Ֆլոանը, երբ անդրադառնում է Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն» վիպակին. «Անշուշտ, քաղաքի ամբողջ չափահաս բնակչության աշխարհը կարծես ներկայացվում է երեխայի աչքերով, սակայն ընթերցողը մշտապես զգում է հեղինակի ներկայությունը: Մի բանիմաց ձայն պատմում է պատմությունը, և արդյունքում առաջանում է ոչ թե վերհուշ, այլ վերադարձ

չափահասությունից դեպի հետ»¹ : Իսկ ինչ վերաբերում է Վ. Սարոյանի «Իմ անունը Արամ է» պատմվածաշարի վերլուծությանը, ապա վերոհիշյալ սարոյանագետը գլխավոր հերոսին՝ Արամին, համարում է «հավերժական մեծահասակ, որն անընդհատ ինքնաճանաչման է հանգում»²:

Գրականության տեսանկյունից երեխաների հանդեպ առկա է մոտեցման երկու ձև. առաջինը երեխային ընկալում է սոսկ որպես մեծահասակի անավարտ և ոչ կատարյալ տարբերակ, և, իբրև այդպիսին, երեխան դրսևորում է անհոգություն, անպատասխանատվություն, դյուրահավատություն և այլն, որոնք անհարիր են մեծահասակի կերպարին: Նա չի ընկալվում որպես անհատ, որն ունի իրեն բնորոշ բնավորության բարդ գծերը: Հակառակ այս մոտեցման՝ երկրորդ տեսակը երեխային համարում է անհատականություն և բարդ արարած, որը ոչ թե ենթակա է մեծահասակի քմահաճույքներին, այլ ունի իր ինքնատիպությունը, ցուցաբերում է մեծահասակին հոգեհարազատ հատկանիշներ, բայց դրանք զարգացնում է սեփական բնավորության ու կենսափորձի տեսանկյունից: Ակնհայտ է, որ սարոյանական արձակում մարմնավորված երեխայի կերպարը հարում է հենց այս վերջին մոտեցմանը: Ահա թե ինչպես է ամերիկացի տեսաբան Դ. Քալոնեն արժևորում սարոյանական երկերի երեխա կերպարներին. «Սարոյանի համար երեխաները մարդկային արարածներ են, ոչ թե սոսկ ինչ-որ իդեալական գեղեցիկ աշխարհի ներկայացուցիչներ: Որպես այդպիսին՝ նրանք նույնքան խոցելի են ու ընդունակ հափշտակվելու, որքան և մեծահասակները»³: Մինչդեռ Ալեքսեյ Զվերևը, անդրադառնալով այս գաղափարին, ավելի հեռուն է գնում և Վիլյամ Սարոյանին նվիրված իր նշանավոր ուսումնասիրության մեջ մասնավորապես նշում է. «Սարոյանի գրվածքներում երեխաներն ապրում են մեծահասակների հետ միևնույն աշխարհում ու բախվում միևնույն հակասություններին ու հաղթահարում նույն ձախողումները, ապրում նույն ուրախություններով, վայելում նույն հաճույքները սոսկ մի բացառությամբ. նրանք այդ ամենն ավելի սուր են զգում, քանի որ առաջին անգամ են ապրում այդ զգացողություններով»⁴:

Ասվածն ակնհայտ է դառնում «Մարդկային կատակերգություն» վիպակի հենց առաջին էջերից, ուր չորսամյա Ուլիսիսը (ի դեպ, սա

¹ Floan, Howard R., William Saroyan. New York, Twayne Publishers, 1966 p 126.

² Տե՛ս նույն տեղում, էջ 84:

³ Calonne, David S., William Saroyan “My Real Work Is Being”, Chapel Hill: The University of North Carolina Press, 1983.

⁴ Зверев А.М., Грустный, солнечный мир Сарояна. Ереван, 1982, ст. 71

Հովերոսի «Ողիսականի» հերոս Ողիսևսի անվան տարբերակն է) զբոսնում է տան շուրջըլորն ու սկզբում տեսնում սկյուռիկին, ապա սևեռուն նայում ծառին նստած թռչնակին, իսկ քիչ անց նկատում է քաղաքով անցնող գնացքն ու ձեռքով անում գնացքի պատուհանից նայող սևամորթին, որը նույն կերպ պատասխանում է փոքրիկին: Այս ամենը, որոնք մեծահասակների համար մանրուքներ են, երեխան ընկալում է որպես փոքրիկ հրաշքներ ու անգամ չի հիասթափվում, երբ նույն գնացքի պատուհանից նայող մի ծերունու նա ձեռքով է անում, իսկ վերջինս չի պատասխանում: Մանչուկը հստակ գիտակցում է, որ այս՝ առաջին հայացքից աննշան թվացող երևույթները կերտում են կյանքը, ու հիանում է այդ ամենով՝ յուրաքանչյուր պարզ մասնիկում գտնելով գեղեցիկն ու գրավիչը: Իսկ մեծահասակները, որոնք կբեւ են կյանքի ծանրության տակ, անկարող են այլևս հիանալ այն պարզ ճշմարտությամբ, թե կյանքի ամեն անկյունում առկա է գեղեցիկը: Այս գաղափարն իր գազաթնակետին է հասնում վերոհիշյալ դրվագի վերջին նախադասությամբ, երբ Ուլիսը մի ձու է գտնում. «Նա մի րոպե նայեց դրան, բարձրացրեց, բերեց մայրիկի մոտ ու զգուշորեն հանձնեց նրան. այդկերպ նա նկատի ուներ մի բան, որը ոչ մի մարդ չի կարող կռահել, և ոչ մի երեխա չի հիշի, որպեսզի վերապատմի»⁵: Երեխան միաժամանակ զգում է թե՛ վախ, թե՛ ակնածանք բնության հանդեպ ու միափյուրվում է բոլոր արարածների, անգամ ձվի հետ, որը խորհրդանշում է ծնունդ և կյանք: Երեխայի այս ընկալումներն ընթերցելիս ակնհայտ է դառնում հեղինակի աշխարհընկալումը, որը ևս կարծես իր շուրջը պրպտող փոքրիկ երեխա լինի:

Սակայն Սարոյանի արձակի մեծահասակ հերոսները ևս հաճախ մտածում ու գործում են որպես երեխա, քանի որ չեն կորցրել մանկական աշխարհընկալումը: Սա, անտարակույս, պայմանավորված է մի պարզ, բայց խորիմաստ ճշմարտությամբ. տարիքը բնավ չի բնորոշում հոգու կանչը, քանի որ շատ հաճախ ծեր մարմնում ապրում է երիտասարդ հոգի: Հենց սրանով է բացատրվում է Վ. Սարոյանի «Իմ անունը Արամ է» պատմվածաշարի հերոսների՝ Ղարոլանյանների գերդաստանի մեծահասակների տարօրինակ, երբեմն անհասկանալի վարքագիծը: Անդրադառնալով այս խնդրին՝ սարոյանագետ Ֆլուանը գրում է. «Երիտասարդության ու առաջացած տարիքի միջև տարբերության հերքումը ծնում է մեծահասակների, որոնք հավերժական երեխաներ են, ու երեխաների, որոնք երբեք երիտասարդ չեն»⁶: Ասել է թե՛ հենց այս

⁵ Saroyan W., "The Human Comedy", Orlando: A Dell Book, 1966, p 13.

⁶ Floan, Howard R., William Saroyan. New York, Twayne Publishers, 1966 p 83.

մանկանման մեծահասակներն ու իմաստուն մանուկներն են, որ սարոյանական երկերին հաղորդում են ինքնատիպություն և մեծ ազդեցություն են թողնում ընթերցողի հոգում: Ուշագրավ է նաև, որ վերոհիշյալ սարոյանագետը հատուկ մոտեցում է ցուցաբերում երեխայի կերպարակերտման խնդրին և համեմատելով Սարոյանին ու ամերիկացի մյուս գրողներին՝ մասնավորապես նշում է. «Տարբերությունը Սարոյանի պատմվածքներում առկա բախման մեջ է, որը մեծահասակ-երեխա բևեռացման արդյունք չէ, այլ մարդու սրտում անթեղված հակասական ազդակների արգասիք»⁷:

Սարոյանական աշխարհի երեխաներն անմեղ են, լի երազանքներով ու այդ երազանքներն իրականացնելու անհագ ձգտմամբ: Այսպես, «Մարդկային կատակերգության» գլխավոր հերոս Հումերը, որի անունը ևս առնչվում է հույն գրող Հումերոսին, թեպետ ընդամենը տասնչորս տարեկան է և բնավ իրավունք չունի այդ տարիքում կատարել իր ներկա աշխատանքը, ձգտում է դառնալ Իթաքե քաղաքի լավագույն հեռագրավարը, իսկ «Կրկեսը» պատմվածքի հերոսը կրկես հաճախելու համար փախչում է դասերից, թեպետ վստահ է, որ դպրոց վերադառնալիս ծեծի է ենթարկվելու:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պատմվածաշարի գլխավոր հերոսի՝ Արամի կերպարը: Թեպետ ամեննին էլ չի ներկայացվում վերջինիս կյանքի ժամանակագրական պատկերը, բայց բացահայտվում է նրա անցած ուղին մանկությունից մինչև հասունություն: Նա ձգտում է դառնալ աշխարհի հզորագույններից մեկն ու անգամ փող չի խնայում գնելու այն գրքույկը, որը պետք է օգներ նրան հասնելու իր նպատակին: Սակայն նա նաև ընկերանում է իր զարմիկ Մուրադին, ու միասին ձի են գողանում՝ քաջ գիտակցելով հանդերձ իրենց արարքի անթույլատրելիությունն ու վիրավորանքը, որ կրելու էր իրենց ընտանիքը: Բայց երեխաների եզակի փիլիսոփայության համաձայն, եթե այդ ձին պարզապես ձիավարելու ոչ թե վաճառքի համար էր, ուստի այն իրական գողություն չէր: Ասել է թե՛ այս երեխաները պատրաստ են ընդունելու կյանքի ցանկացած մարտահրավեր ու այդ ամենին տալու սեփական բացատրությունը: Արամի կյանքի ամբողջական պատկերը ներկայացվում է առաջին ու վերջին պատմվածքների միջոցով, որոնցից մեկը՝ «Մպիտակ ձիու ամառը» խորագրով երկը, ներկայացնում է ձի գողանալու վերաբերյալ երեխայի խոհերը, իսկ վերջինը՝ «Խոսք խաբեբաներին», անդրադառնում է հավատի խնդրին ու պատկերում կենսական ճշմարտության հասած Արամին:

⁷ Նույն տեղում, էջ 83:

Վերոհիշյալ պատմվածաշարի մեկ այլ պատումում՝ «Նոնենիներ»-ում, Սարոյանը պատումում է, թե ինչպես Արամի հորեղբայր Մելիքը որոշում է նոնեի աճեցնել անապատում սոսկ այն պատճառով, որ այդ պտուղը վերջինիս հիշեցնում է իր հայրենիքն ու իրական արմատները, իսկ Արամը վստահ է այս նախաձեռնության անհաջողության մեջ, բայց չի կանգնեցնում հորեղբորը, քանի որ ակնածանքն ստիպում է նրան լռել, ու միգուցե նաև ինչ-որ ներքին զգայականությունն ստիպում է նրան նաև հարգել հորեղբոր երազանքը:

Սարոյանական երկերի մեկ այլ ուշագրավ առանձնահատկությունը երեխաների մշտական կերպարանափոխումն է, որն աներկբայելիորեն պայմանավորված է հեղինակի սեփական պրպտումներով՝ կապված գաղթականության հետ: Լինելով գաղթական հայերի զավակ՝ նա մշտապես ստիպված էր հարմարվել ամերիկյան մշակույթին, ենթարկվել տառապագին փորձությունների, ուր, անշուշտ, իր էական ազդեցությունն ուներ նաև հորից վաղ հասակում զրկվելու հանգամանքը: Այդ է պատճառը, որ սարոյանական արձակի երեխա կերպարները հաճախ անվստահ են, շրջապատող աշխարհի հետ հայտնվում են ոչ այնքան նպաստավոր փոխհարաբերությունների մեջ, բախվում են հարազատի կորստին ու իրենց ճանապարհին ծագած խնդիրներն ընկալում ոչ որպես սովորական երեխաներ, այլ հոգեկան ինչ-որ անբացատրելի տխրությամբ համակված մեծահասակներ: Անշուշտ, ակնհայտ է, որ այս հանգամանքը պայմանավորված է հեղինակի սեփական դառը փորձություններով:

Ասվածի ապացույցը կրկին կարելի է գտնել «Մարդկային կատակերգություն» վիպակում, ուր հեղինակը պատկերում է Հոմերի անցած ուղին մանկությունից մինչև հասուն տարիք: Երեխայի աշխարհի հակասականությունը հատկապես տեսանելի է, երբ վերոհիշյալ վիպակում ընթերցողը համադրում է երկու եղբայրներին՝ Հոմերին և Ուլիսին: Հոմերը սկզբում հիացած է հեռագրավարի իր աշխատանքով, քանի որ ընկալում է սոսկ դրական կողմերը, իսկ Ուլիսի փոքրիկ, անամպ աշխարհում տեղ չունեն կյանքի այլանդակությունները: Բայց շուտով այս երեխաները բախվում են մահվանն ու հարկադրված ընդունում կյանքի պարտադրած ճմարտությունը: Սակայն նրանք պատկանում են այն սակավ երջանիկների թվին, որոնք ունեն սատարող ու զգայուն մայր: Մինչդեռ «Նարինջները» պատմվածքի հերոսն ստիպված է նարինջներ վաճառել, որպեսզի դրամ հայթայթի ընտանիքի համար: Երեխայի տարտամ ժպիտը ոչ միայն չի գրավում անցորդներին, այլև չի ստանում որևէ պատասխան ժպիտ, ու երեխան հարկադրված շարունակում է խեղդվող արցունքներով ժպտալ ու նարինջներ առաջարկել անցորդներին, քանի որ չի կարող հուսալ տանը դուրս-ինչ գթասրտություն գտնելու մասին. նա վաղ հասակում

կորցրել էր ծնողներին, իսկ ապաստան տված բարեկամները տղային փողոց էին ուղարկել՝ վաճառելու չարաբաստիկ նարինջները:

Ամփոփելով սարոյանական արձակում երեխաների կերպարների կերտման հիմնահարցը՝ անհնար է զանց առնել գաղթականության խնդիրը, որը բացահայտ կամ ծածուկ, բայց մշտապես առկա է արձակագրի գրվածքներում: Հայ ընտանիքների գավակները, ծնվելով Միացյալ Նահանգներում, ակամա ընդունում են ամերիկյան կենսաձևը, բայց անկարող են միաժամանակ հերքել իրենց արմատները: Սակայն կյանքը դժբախտաբար թելադրում է իր կանոնները, և Ամերիկայում ծնված երեխաները հեշտությամբ հարմարվում են միջավայրին, իսկ նրանց ծնողներն ապրում են հավերժական օտարացման մեջ, ու ակամայից ծնվում է սերունդներին բաժանող անդունդը: Ասվածի ապացույցն է «Իմ անունը Արամ է» պատմվածաշարում գետեղված «Նպարավաճառը» խորագրով պատմվածքը, ուր երեք տղաներ՝ երկու հայ և մեկ պորտուգալացի, գնում են նպարավաճառի խանութ և վերջինի՝ նրանց ծագմանը վերաբերող հարցին միանշանակ պատասխանում, թե Կալիֆոռնիայից են, որովհետև այնտեղ են ծնվել: Հեղինակին անասելի ցավ է պատճառում գաղթականների երեխաների՝ ամերիկյան հասարակությունից տարանջատման խնդիրը, ինչպես նաև նույն այդ հասարակության մեջ հայկական ինքնությունն ու ոգին պահպանելու կենսական հիմնահարցը: Այս գաղափարների մարմնավորումն ընթերցողը տեսնում է բազմիցս հիշատակված Արամի կերպարում, որը, անշուշտ, ժառանգել է Ղարօղլանյանների տոհմի էական հատկանիշները, բայց բնավ չի կիսում իր հորեղբայրների իդեալականացված զգացումները. նա խորապես իրատես է ու գիտակցում է, որ հոգևորի կողքին ոչ պակաս էական է նյութականի առկայությունը: Ասվածի ապացույցն է «Պրեսբիտերյան երգչախմբի երգիչները» պատմվածքի թեման, երբ Արամը երգչախմբում երգելու համար ծեր տիկնոջից գումար է պահանջում ոչ միայն իր, այլև ընկերոջ համար, թեպետ վերջինս չէր էլ երգելու:

Արամի կերպարին Սարոյանը հակադրում է նրա հորեղբայրներին, որոնք անտրամաբանական արարքներով ավելի են խորացնում իրենց նյութական ծանր վիճակը, բայց գերադասում են ստանալ հոգեկան բավարարվածություն, իսկ Արամը նրանց չի խոչընդոտում, որովհետև ամերիկյան մտածելակերպով հանդերձ՝ ունի հայկական արմատներ ու ինչ-որ տեղ կիսում է այդ հոգևոր բավարարվածությունը: Ահա թե ինչու սարոյանագետ Վոլտեր Շիերն Արամին անվանում է սահմանգծում հայտնված անձ և գրում է. «Որպես տղա՝ Արամը թե՛ հայկական և թե՛ ամերիկյան հասարակության անդամ է և գործում է որպես հասկացող միջնորդ: Իր հայկական արմատներից նա ժառանգել է անհատական

աշխարհի զգացողությունը: Բայց նա նաև հասկանում է, թե ինչպես է դրսի աշխարհն ազդում իր ոչ հայկական գիտակցականության վրա: Շատ դեպքերում Արամը ոչ թե ըմբոստ է, այլ ուրիշների երկյուղների, երազանքների ու հակումների վկան»⁸:

Այսպիսով, Սարոյանի կերտած գրական երկերում, ուր գլխավոր հերոսը երեխան է, մանուկների ու մեծահասակների աշխարհները երկձյուղված չեն: Չնայած ուշադրության կենտրոնում երեխան է, բայց մեծահասակները միշտ ներկա են և մեծ մասամբ միջնորդի դեր են կատարում պատումի ու ընթերցողի ընկալման խնդրում: Հարկ է նշել, որ սարոյանական պատումը պարզ է, կուռ կառուցվածքով, գերծ է մանվածապատ իրադարձությունների պատկերումից, ներշնչում է հույս, քանի որ հեղինակն ինքն էլ աշխարհին նայում է մանկան վճիտ աչքերով ու փորձում առօրյա տաղտկալի կյանքում գտնել անմեկնելի կախարդականն ու հրաշալին:

Ռ. Ղազարյան

**Երեխայի կերպարը Վիլյամ Սարոյանի փոքր արձակում
Ամփոփում**

Հոգվածը նվիրված է ամերիկացի գրող Վիլյամ Սարոյանի փոքր արձակում գերակայող տեղ զբաղեցնող երեխայի կերպարի քննությանը: Մասնավորապես նկատվել է, որ սարոյանական արձակի երեխան օրեցօր բացահայտում է իրեն շրջապատող աշխարհն ու ամեն ինչում հրաշք է գտնում: Սակայն դա բնավ չի նշանակում, թե երեխաների ու մեծահասակների աշխարհը տարանջատված է: «Իմ անունը Արամ է» պատմվածաշարի գլխավոր հերոսը՝ Արամը, կարծես հավերժական մեծահասակ է, որն անընդհատ ինքնաճանաչման է ձգտում: Սակայն Սարոյանի արձակի մեծահասակ հերոսները ևս հաճախ մտածում ու գործում են որպես երեխա, քանի որ չեն կորցրել մանկական աշխարհընկալումը: Ասել է թե՛ հենց այս մանկաման մեծահասակներն ու իմաստուն մանուկներն են, որ սարոյանական երկերին հաղորդում են ինքնատիպություն և մեծ ազդեցություն են թողնում ընթերցողի հոգում:

Р. Казарян

Образ ребенка в малой прозе Вильяма Сарояна

Резюме

Статья посвящена анализу образа ребенка, занимающего доминирующее место в малой прозе американского писателя Вильяма

⁸ **Shear W.**, “Saroyan’s Study of Ethnicity”, Critical Essays on William Saroyan, Ed. Harry Keyishian. New York: G. K. Hall & Co., 1995, p 88.

Сарояна. В частности, заметим, что ребенок из сарояновской прозы ежедневно открывает для себя окружающий мир, находя во всем чудеса. Однако это вовсе не значит, что миры детей и взрослых разъединены. Главный герой цикла рассказов «Меня зовут Арам» кажется вечным взрослым, стремящимся к постоянному самопознанию. Но взрослые герои прозы Сарояна также часто рассуждают и действуют подобно детям, поскольку еще не утратили детское миро-восприятие. Именно эти взрослые, подобные детям, и мудрые дети придают произведениям Сарояна особое своеобразие и сильно волнуют души читателей.

R. Ghazaryan

Child's Character in William Saroyan's Little Prose

Summary

Article is dedicated to the analysis of child's character dominating in William Saroyan's little prose. It particularly states that in Saroyan's prose the child day by day reveals the world that surrounds him and finds miracle in everything. But this doesn't mean that the world of the child and the adults is separated. The main character of the collection of stories entitled "My Name is Aram", i.e. Aram is an eternal adult who always seeks self-awareness. But the adult characters of Saroyan's prose also think and act like children as they haven't lost their childish worldview. This is to say that just those childish adults and wise children give uniqueness to Saroyan's literary works and have a great influence on the reader's soul.